Արձանագրություն N 3

N <<ՆՀԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1>>
Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 30 օգոստոսի 2017թ.
ժ.10:30

Մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ.
Ա. Գրիգորյան /բուժական գծով փոխտնօրեն/
Հանձնաժողովի անդամներ ՝
Ս. Ժամագործյան /երկրորդ բաժնի վարիչ/
Ք. Խաչատրյան /դեղատան վարիչ/
Հանձնաժողովի քարտուղար՝
Հայկանուշ Թովմասյան

Օրակարգ

Որակավորման չափանիշների գնահատման նիստի մասին

1. Նիստը տեղի է ունեցել ՀՀ ԱՆ <<Նարկոլոգիական հանրապետական կենտրոն>> ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան Աճառյան փ. 2-րդ նրբ. շենք 2. հասցեում:
2. **<<ՆՀԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1>>** ծածկագրով ընթացակարգին հայտ էին ներկայացրել հետևյալ մասնակիցները

2.1<<Ֆարմ Թրաստ>> ՍՊԸ-ն, ք. Երևան, Մամիկոնյանց 48, ս. 101 , Հեռ. 010 20-34-14, 010 20-34-15, էլ. փոստ՝ albaghyan@mail.ru

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1 <<Ֆարմ Թրաստ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3.Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով
<<Ֆարմ Թրաստ>> ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետնանց պարտավորությունների ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած (եզրակացություն) հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող՝ հիմք ընդունելով **<<ՆՀԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1>>** ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5-րդ կետով նախատեսված փաստաթղթերը առկայությունը:
2. <<Ֆարմ Թրաստ>> ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ըստ որի գնահատող հանձնաժողովը որոշեց՝

3.1 **<<ՆՀԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1>>** ծածկագրով ընթացակարգի 1 չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում <<Ֆարմ Թրաստ>> ՍՊԸ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, որի հետ առաջարկվում է կնքել պայմանագիր:

3.2 "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ ենթակետի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել միայն 1 մասնակից:

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

4 Շահերի բախման բացակայության մասին

<<ՆՀԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված ծածկագրով գնման ընթացակարգի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի հնահատման նիստից հետո հայտարարում է, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունի շահերի բախում:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել: